ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
31.03.2022 թվականի դրությամբ

Նպատակ 1. Կառուցապատման թույլտվությունների համակարգերի կանոնակարգում և պարզեցում **Խնդիր. Վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման կարգերի վերանայում**		
Հ/Հ	**Միջոցառում**	**Կատարման արդյունք**
1.	1.1. Կառուցապատման թույլտվությունների տրամադրման գործառույթների զգալի մասը իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ e-permits միասնական համակարգի միջոցով, դիտարկելով այն որպես էլեկտրոնային մեկ հարթակ, որտեղ կգործեն ընթացակարգին մասնակից բոլոր մարմինները և կազմակերպությունները	ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունվել է «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N1985-Ն ՀՀ կառավարության որոշումը, ըստ որի. 2022 թվականի հունվարի 1-ից ***Կոտայքի մարզի Նաիրի, Արմավիրի մարզի Էջմիածին, Արարատի մարզի Մասիս և Լոռու մարզի Վանաձոր համայնքներում*** նախագծման և շինարարության թույլտվությունների տրամադրումն իրականացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ e-permits միասնական համակարգի միջոցով: Ներկայումս վերը նշված խոշորացված ***4 համայնքների թվով 41 բնակավայրեր*** օգտվում են կառուցապատման թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային e-Permits համակարգի ռացիոնալ, արագ և թափանցիկ

		գործելու, միաժամանակյա համաձայնեցումներ ստանալու հնարավորություններից: 1. Վանաձոր համայնք (4 բնակավայր) շուրջ 117 000 բնակիչ 2. Մասիս համայնք (27 բնակավայր) շուրջ 81 800 բնակիչ 3. Վաղարշապատ համայնք (2 բնակավայր) շուրջ 62 880 բնակիչ 4. Նաիրի համայնք (8 բնակավայր) շուրջ 38 330 բնակիչ ***Ընդհանուր՝ շուրջ 300 000 բնակիչ*** Համակարգի ներդրումից ի վեր՝ սկսած 2015 թվականից, գրանցվել է ***շուրջ 1120 օգտատեր***, որից ***514-ը գրանցվել է 2022 թվականի հունվար*** ամսվա ընթացքում: 2022 թվականի միայն հունվար ամսվա ընթացքում համակարգի միջոցով նշված 4 համայնքներում ստացվել է ***շուրջ 630 դիմում*** (մինչդեռ նախորդող 2021 թվականի ընթացքում ամբողջ հանրապետությունում ստացվել է 73-ը): 2022 թվականի հունվար ամսվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրվել է ***290 թույլտվություն*** (մինչդեռ նախորդող 2021 թվականի

		ընթացքում ամբողջ հանրապետությունում տրամադրվել է 26-ը):
2.		Քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման E-permits համակարգի արդիականացման և բացառապես էլեկտրոնային եղանակով վերոգրյալ գործընթացները կազմակերպելու նպատակով Քաղաքաշինության կոմիտեն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարության և Կադաստրի կոմիտեի հետ իրականացված աշխատանքային քննարկումների արդյունքում ուսումնասիրել է 2019-2021 թվականների տարբեր ժամանակահատվածներում համայնքների ղեկավարների կողմից տրված քաղաքաշինական ոլորտի թույլտվությունների ծավալները և առանձնացրել թվով չորս մարզեր՝ Կոտայքի, Արարատի, Արմավիրի և Լոռու մարզերը, որոնցից ընտրվել են Եղվարդ, Էջմիածին, Մասիս և Վանաձոր համայնքները: Հարցի շուրջ քննարկումներ են կազմակերպվել մարզպետների և բոլոր 4 համայնքների ղեկավարների հետ: Քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման E-permits համակարգի արդիականացման և դիմային մասի կատարելագործման, ինչպես նաև համակարգչային և

		հեռախոսային տարբերակների՝ օգտագործողին հնարավորինս հարմարեցված և պարզեցված գործարկումն ապահովելու նպատակով Քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ձեռնարկել է գնման գործընթաց, որը միտված է եղել E-permits համակարգի որոշ տարրերի արդիականացմանը և 2022 թվականի հունվարի 1-ից կկայանա պիլոտային ծրագրի մեկնարկը: E-permits համակարգի որոշ տարրերի արդիականացման և 2022 թվականին ծրագրի սպասարկման համար Կոմիտեն հայտարարել է նոր մրցույթ: Քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման E-permits համակարգի արդիականացման և վերոգրյալ գործընթացները բացառապես էլեկտրոնային եղանակով վերը նշված համայնքներում կազմակերպելու նպատակով Կոմիտեն մշակել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման համակարգի պիլոտային ծրագիր իրականացնելու մասին» որոշման օրենքի նախագիծ, ՀՀ Ազգային ժողովն ընդունել է Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի նախագծում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը: Սույն օրենքի փոփոխություններով սահմանված կարգավորումներով նախատեսվում է անցում կատարել բացառապես

		քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրմանը: Վերոգրյալ հոդվածներով կարգավորումների գործելիության անցումային դրույթ է սահմանվել ՀՀ կառավարության հաստատած կարգերն ուժի մեջ մտնելը, բայց ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 30-ը: Հայտնում ենք, որ նախագիծը հավանության է արժանացել ՀՀ Ազգային ժողովի կողմից և սույն թվականի հունիսի 9-ին ստորագրվել է Հանրապետության նախագահի կողմից: Ելնելով վերոգրյալից Կոմիտեի կողմից համապատասխան շտկումներ են իրականացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի փաթեթում, այն ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ և ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի N1985-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդ, Արմավիրի մարզի Էջմիածին, Արարատի մարզի Մասիս և Լոռու մարզի Վանաձոր համայնքներում՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը, շինարարության թույլտվությունները, ճարտարապետաշինարարական նախագծերը, շինարարության ավարտի ակտերը և շահագործման թույլտվությունները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ կադաստրի կոմիտե

		էլեկտրոնային եղանակով ներկայացման կարգ սահմանված է նոր հավելվածներով, և վերը նշված համայնքներում որոշմամբ սահմանված քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվությունների ստացման գործառույթները գործում են 2022 թվականի հունվարի 1-ից:
Նպատակ 2. Քաղաքաշինական կայուն զարգացում. ներդաշնակ կենսամիջավայրի ձևավորում և նպաստում բնակչության տարածքային համաչափ բաշխվածությանը. ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ստեղծում. ազգային արժեքների և ավանդույթների, հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման և դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում. անկառավարելի ուրբանիզացման հնարավոր սպառնալիքների չեզոքացում. **Խնդիր. Տարածական պլանավորման բազմակենտրոն զարգացման սկզբունքների ներդրում**		
3.	2.1.1. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում 2.1.2. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի մշակում	2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ 2025-2027թթ. (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) Միջոցառման շրջանակներում 2021թ. ընթացքում իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:

4.	2.2. ՀՀ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծերի մշակում	2023թթ. (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) - Հանրապետության բոլոր համայնքներում 2017-2023թթ. ընթացքում տեղական մակարդակի ծրագրային փաստաթղթերով (գլխավոր հատակագծեր և գոտևորման նախագծեր) ապահովման նպատակով «Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակում» ծրագիրը մեկնարկել է 2017 թվականի մայիսի 24-ին: - Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման միջոցով ՀՀ համայնքներն ապահովվում են տարածական պլանավորման փաստաթղթերով և տարբեր մակարդակների փաստաթղթերի համատեղման շնորհիվ խնայվում են զգալի ֆինանսական միջոցներ: - Ծրագրի կատարման շրջանակներում թվով 4 նախագծային ընկերության հետ կնքվել է թվով 11 պետական գնման պայմանագիր՝ թվով 60 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ մշակելու համար, որոնց ընդհանուր պայամագրային արժեքը կազմում է՝ 1. 205.588,0 հազար դրամ: - Կնքված պայմանագրերի շրջանակներում 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մշակվել է (Քաղաքաշինության կոմիտեի կողմից ընդունվել է) թվով 490 բնակավայրի ընդգրկմամբ թվով 44 միկրոռեգիոնալ

		մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է՝ 839,0 մլն. դրամ, այդ թվում ըստ մարզերի՝ - 2021 թվականին սահմանված ժամկետում կատարվել են պետական բյուջեով նախատեսված թվով 21 նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքներ՝ ընդհանուր թվով 200 բնակավայրի համար: Արագածոտն-1, 3, 4, 5, 6, 7, 8, Շիրակ-1, 2, 3, 4, 5, 6, 7, Գեղարքունիք-3, 4, 8 և Աշոցք համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման լրամշակված փաստաթղթերը 2021 թվականին ներկայացվել են շահագրգիռ մարմիններ՝ համաձայնեցման: 2022 թվականին ՀՀ Շիրակի մարզի Շիրակ-1, 4, 6, 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման լրամշակված փաստաթղթերին տրամադրվել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություններ: - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել են 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի (մասամբ) և Շիրակի (մասամբ) մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման համար գնման հայտերը:

		- 2022 թվականի հունվարի 25-ին պայմանագիր է կնքվել ՀՀ Գեղարքունիքի մարզի (թվով 51 բնակավայրը ներառող 5 փաստաթուղթ) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքների համար: - 2021 թվականի նոյեմբերի 9-ին հայտարարված ՀՀ Շիրակի մարզի (թվով 34 բնակավայրը ներառող 4 փաստաթուղթ) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքների մրցույթը չի կայացել՝ ներկայացված հայտը գնահատվել է անբավարար: Գնման նույն փաթեթի մասով կրկին հայտարարվել է մրցույթ:
5.	2.3. «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակում	2021 թվականի մայիսի 2-րդ տասնօրյակ - «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման և քաղաքաշինական կանոնադրության նախագծի մշակման աշխատանքները մեկնարկվել են 2019 թվականի դեկտեմբերի 3-ին «Արխիտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ պայմանագրի կնքմամբ: - Նախագծի նպատակն է «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածում ստեղծել հանգստի գոտի, ներդրումային ծրագրերի իրականացման համար առանձնացնել նպատակահարմար գոտիներ, ինչպես նաև Ազգային պարկի տարածքում սահմանել կառուցապատման կանոնակարգման չափորոշիներ:

		- Պայմանագրի կատարման շրջանակներում նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ քննարկման: Նախագիծը գտնվում է շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների լրամշակման փուլում: - «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման և քաղաքաշինական կանոնադրության նախագծի մշակման աշխատանքների վերջնաժամկետը ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N2134-Ա որոշմամբ երկարաձգվել է մինչև 2022 թվականի մայիսի 17-ը: - 2022 թվականի մարտի 22-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի մշակույթի տանը կազմակերպվել էր «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության» շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և դրա փորձաքննական գործընթացի վերաբերյալ հանրային քննարկում-լսում /երկրորդ փուլ/, սակայն քննարկում-լսումը չի կայացել՝ տեղի բնակիչների բացասական տրամադրվածության պատճառով:

6.	2.4. Երևան քաղաքի մուտքերին հարող միջպետական և հանրապետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակում	2025թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) Հայաստանի Հանրապետության միջպետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից տարածքներն առանջնացված են որպես հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներ, տարիների ընթացքում այդ տարածքներում կառուցապատումները կրել են տարերային բնույթ, ուստի անհրաժեշտություն է առաջացել իրականացնել հանրապետության խոշոր քաղաքների (Երևան, Գյումրի, Վանաձոր) մուտքերին հարող վերը նշված գոտիների տարածքներում կառուցապատման միասնական սխեմաների մշակման աշխատանքներ: Այն կկանոնակարգի արդեն կատարված և հետագա կառուցապատման գործառույթները, կնպաստի համահունչ միջավայրի ձևավորմանը: ՀՀ քաղաքաշինության ոլորտի ՀՀ 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի պետական բյուջեի հայտում՝ նոր նախաձեռնությունների մասով ՀՀ Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական

		սխեմաների մշակման արժեքի խոշորացված ցուցանիշներով նախնական հաշվարկ է ներկայացվել: Հաշվարկով նախատեսվել է ՀՀ 3 խոշոր համայնքների թվով 12 հատ մուտքերին հարող միջպետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների:
7.	2.5. Քաղաքաշինական և տարածական պլանավորման ոլորտում կարողությունների զարգացման համար տեղական համայնքներին տեխնիկական խորհրդատվության և օժանդակության տրամադրում	2023թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) Քաղաքաշինական և տարածական պլանավորման ոլորտում կարողությունների զարգացման համար տեղական համայնքներին տեխնիկական խորհրդատվության և օժանդակության տրամադրման նպատակով մշակվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 66-Լ հրամանով հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգով առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու նպատակով լիազոր մարմին ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի կազմման ուղեցույցը /հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունների գործընթացի կրճատման և

		համայնքների ղեկավարների աշխատանքների դյուրինացման համար/: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից նախատեսվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի մարտի 10-ի N20-Ա/3 հրամանով հաստատվել է մարզերում աշխատանքային հանդիպում-քննարկումների ժամանակացույցը՝ ՀՀ մարզերում և խոշորացված համայնքներում իրականացնել աշխատանքային հանդիպում-քննարկումներ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով իրականացված միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի հիմնադրույթներին ծանոթացնելու նպատակով: 2022 թվականի մարտի 17-ին ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում տեղի է ունեցել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով մշակված ՀՀ Արմավիրի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի հանրահռչակման առաջին քննարկումը:
8.	2.6. Առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի շենքային պայմանների գույքագրում, ինչպես նաև վերանորոգման, վերակառուցման, օտարման նպատակահարմարության, նոր շենքերի կառուցման կարիքի գնահատում,	2026թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) Միջոցառման շրջանակներում 2021թ. ընթացքում իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:

	հանրապետության համար կազմել բժշկական, սոցիալական և կրթական հաստատությունների տեղակայման նախընտրելի քարտեզ	
Նպատակ 3. Պատմաճարտարապետական և բնական ժառանգության պահպանություն, վերականգնում, խնայողական օգտագործում **Խնդիր. Ոլորտը կարգավորող մեթոդաբանության, ուղեցույցի և ռազմավարական փաստաթղթի մշակման անհրաժեշտություն**		
9.	3.1. Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության քաղաքաշինական ռեաբիլիտացիայի ծրագրերին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	2025-2026թթ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) Ճարտարապետական ժառանգության ու քաղաքների պատմամշակութային միջավայրերի պահպանություն և վերազարգացում. ազգային արժեքների և ավանդույթների, հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանում, դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում. Մշակվել և 2022 թվականի հունվարի 26-ի N 01/11.4/473-2022 գրությամբ շահագրգիռ մարմիններ կարծիքի է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի մշակման,

		փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագծի փաթեթը: Շահագրգիռ մարմինների կողմից ստացվել են առաջարկություններ և դիտողություններ: Շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված դիտողություններն ու ռաջարկություններն ամփոփելուց հետո լրամշակված Նախագիծը պատրաստվում է ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:
10.	3.2.1. ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագիծը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում 3.2.2. ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում 3.2.3. ՀՀ զբոսաշրջային համակարգի տարածքային կազմակերպման գլխավոր նախագծի մշակում	2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ Միջոցառման շրջանակներում 2021թ. ընթացքում իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել: 2025 (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) 2026- 2027թթ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով)
11.	3.3. Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործումը Հայաստանում	2025թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով)

Նպատակ 4. Քաղաքաշինական ոլորտի գործընթացների կանոնակարգում, դյուրինացում ու գործառնության արդյունավետության բարձրացում, Խնդիր. Տեղեկատվական միասնական հասանելի հարթակի ստեղծում		
12.	4.1. Պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ներդրման ծրագրի իրագործում	2025-2026թթ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով)
13.	4.2. Նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության գործառույթների քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների վերանայման վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի ներկայացում	2021թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) Մշակվել է «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որով նախատեսվում է կառուցապատման ընթացակարգերի վերանայում, ինտեգրված միասնական էլեկտրոնային e-permits համակարգի միջոցով ընթացակարգերի կազմակերպում, ավարտված օբյեկտի ընդունող հանձնաժողովի կազմման և աշխատանքների համակարգման գործառույթները համայնքին վերապահելը: Նախագծի ընդունման նպատակն է վարչարարության նվազեցումը, գործող ընթացակարգերի պարզեցումը, ժամկետների նվազեցումը: ՀՀ կադաստրի կոմիտեի հետ համատեղ քննարկումների արդյունքում հստակեցվել են շինարարությունը ոչ էական շեղումներով իրականացնելու դեպքերը, ներդրվել է շինարարական

		օբյեկտների ռիսկայնության աստիճանի գնահատման նոր մեթոդաբանություն՝ ելնելով նախատեսվող օբյեկտների մակերեսից, կարևորությունից, բարդությունից և մարդկանց միաժամանակյա կացության պայմաններից: Նախագիծը գտնվում է կարծիքների ամփոփման և լրամշակման փուլում, որոնց ավարտից հետո ՀՀ վարչապետի աշխատակազմ կրկին ներկայացվելու համար:
Նպատակ 5. Տարածքային ռեսուրսների խնայողական օգտագործում, առողջ կենսամիջավայրի ձևավորում Խնդիր. ՀՀ բնակավայրերի տարածքներում առկա նախկին արդյունբերական տարածքների լիարժեք, արդյունավետ օգտագործման անհրաժեշտություն		
14.	5.1. ՀՀ բնակավայրերում արդյունաբերական տարածքների գույքագրում, հարմարեցված օգտագործման հայեցակարգի մշակում	2025թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) Միջոցառման շրջանակներում 2021թ. ընթացքում իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:
Նպատակ 6. Քաղաքաշինական օրենսդրական դաշտի արդիականացում **Խնդիր. Միջազգային օրենսդրությանը համապատասխան իրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի բազայի ստեղծում**		
15.	6.1. Ոլորտի օրենսդրական բազայի կատարելագործում՝ օրենսդրական և ենթաօրենսդրական	2022թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով) Մշակվել և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թվականի մարտի 10-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության

		2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» N 282-Ն որոշումը: Հաշվի առնելով քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում քաղաքաշինական գործունեության համակարգման փորձը և վերլուծելով խնդիրները՝ հստակեցվել են քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համար պատասխանատուները, փաստաթղթերի կազմը, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները: Սահմանվել են նշված գոտիներում համաձայնեցման ներկայացվող փաստաթղթերի սպառիչ ցանկը և ներկայացման կարգը: Իրականացվել են նաև այլ ճշգրտումներ: ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2404-Ն որոշմամբ առանձնացված օբյեկտների տարածքներում՝ քաղաքաշինական գործունեության իրականացման համար գործող լրացուցիչ պահանջները սահմանել են պարզ, հասկանալի ընթացակարգերով և հստակ պահանջներով:
		1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N71-Ն հրամանով հաստավել են <Շենքերի և շինությունների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի ցանկը և ընդհանուր բնութագրերը>,

		2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել է «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Գնումների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Ի կատարումն ՀՀ վարչապետի 2021 թվականի սեպտեմբերի 15-ի N02/16.4/31663-2021 հանձնարարականի ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (մասնագիտական ստորաբաժանումների մասնակցությամբ) ուսումնասիրել և քննարկել է <գլխավոր կապալառուի կամ միասնական պատվիրատուի> գործառույթների սահմանման և վերջիններիս մի խումբ լիազորությունների վերապահման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը: Խնդրի առնչությամբ 24.09.2021թ N 01/14/8655-2021 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի առաջարկ-պարզաբանումը: «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը շահագրգիռ մարմինների քննարկմանն է ներկայացվել Կոմիտեի 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N01/14/9693-2021 գրությամբ: 2021 թվականի դեկտեմբերի 3-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում (այսուհետ՝ Կոմիտե) ՀՀ ֆինանսների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ արտակարգ

		իրավիճակների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ պաշտպանության, ՀՀ արդարադատության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի շինարարների միության, «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, «Հայնախագիծ» բաց բաժնետիրական ընկերության և Կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել քննարկում: Քննարկման արդյունքներով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է մշակել համապատասխան պայմանագրային դրույթների փաթեթ գլխավոր կապալառուի և պատվիրատուի պարտավորություններին ու լիազորություններին վերաբերող իրավական հիմքերի և նախատեսվող ընթացակարգերի ներառմամբ՝ դիտարկելով մշակման ենթակա իրավակարգավորումների մասով առկա միջազգային փորձը: Հաշվի առնելով վերոգրյալը և գնահատելով մշակման ենթակա պայմանագրային փաստաթղթերի փաթեթի խիստ իրավական ուղղվածությունը/բնույթը՝ առաջարկվում է խնդրի կարգավորման համար դիտարկել որակավորված փորձագետի ներգրավման նպատակահարմարությունը՝ միասնական փաթեթով շինարարական ծրագրի գնման/ձեռքբերման պայմանագրային հատուկ դրույթների մշակման համար կամ միջոցառումը հանել:

		3. Կոմիտեի կողմից սահմանված կարգով մշակվել և 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 01/14.1/11159-2021 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Նախագծային հատուկ լուծումներով համալրման ենթակա մի շարք կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկը և դրանց շահագործման մատչելիությունն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 03.03.2022թվականի N250-Լ որոշմամբ: Ներկայումս իրականացվում է նշված որոշման 2-րդ կետով նախատեսված գործընթացը՝ առաջնահերթ միջոցառումների կազմման նախապատրաստական փուլը: 4. մշակվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N 64-Ն հրամանով ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 263-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը: 5. մշակվել և ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 2052-Ն որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

		6. ՀՀ կառավարության 2022 թվականի հուվարի 13-ի N 28-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությունը և այն սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: 7. մշակվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունվարի 27-ի N 01-Ն հրամանով հաստատվել է «Տարբեր նշանակության օբյեկտների նախագծային աշխատանքների տևողության ժամանակավոր նորմերը»: 8. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի, որը շահագրգիռ մամինների դիտողությունների և առաջարկությունների համաձայն լրամշակվել և ներկայուս այն նախատեսվում է ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն: 9. ՀՀ վարչապետի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N 1338-Ա որոշման կատարումն ապահովելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության

		քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանում լրացում կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանների նախագծերը: ՀՀ արդարադատության նախարարության 2022 թվականի մարտի 28-ի N 01/27.1/13214-2022 գրությամբ ներկայացված փորձագիտական եզրակացության համաձայն ներկայուս իրականացվում են նախագծերի լրամշակման աշխատանքները: 10. «Հայաստանի Հանրապետության շենքերի և շինությունների սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) բարձրացման ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծը շահագրգիռ մարմինների առաջարկությունների և դիտողությունների ու ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացության համաձայն լրամշակվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 01/14.1/10360-2021 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի 2022 թվականի փետրվարի 23-ի N 02/12.10/4059-2022 հանձնարարականի համաձայն վերադարձվել է լրամշակման: Այն կներկայացվի

		ՀՀ վարչապետի աշխատակազմ քաղաքաշինության բնագավառում պետական կառավարման մարմնի իրավասությունների շրջանակներում վերապահված գործառույթների ապահովման և համապատասխան (այդ թվում՝ շենքերի և շինությունների սեյսմակայունության բնագավառում) լիազորող նորմերի սահմանման նպատակով ՀՀ քաղաքաշինության կոմիտեն մշակված «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծն ընդունվելուց հետո: 11.Կոմիտեի նախագահի 2021 թվականի հունվարի 03-Ն հրամանով հաստատվել են ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանում կատարված լրացումներն ու փոփոխությունները, որոնք վերաբերում են բնակելի, հասարակական և արտադրական շենքերի նախագծային առաջադրանքներում ապաստարանների կամ թաքստոցների նախատեսման պարտադիր պահանջներին: 12. ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի N410-Ն որոշմամբ բնակելի, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ճարտարապետահատակագծային առաջադրանքներում ամրագրվել են պարտադիր պահանջներ ապաստարանների կամ թաքստոցների նախատեսման վերաբերյալ:

		13. Կոմիտեի նախագահի 2021 թվականի մայիսի 26-ի N41-Ն հրամանով հաստատվել է <Տարբեր նշանակության շենքերի ու շինությունների սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) բարձրացման առաջնահերթության գնահատման մեթոդաբանությունը>: 14. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021թ մշակվել է <ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին> ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ ինժեներական ենթակառուցվածքներին միացման համար մատակարար կազմակերպություններից տեխնիկական պայմանների և ելակետային տվյալների տրամադրման արդի պահանջների վերաբերյալ, որում կատարվել են ընթացակարգերի հստակեցումներ, մասնակի պարզեցում: Նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N2052-Ն որոշմամբ: 15. Կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N105-Ն հրամանով հաստատվել է <ՀՀ մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցը>

		16. մշակվել է «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի N 228-Ն որոշմամբ: 17. մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 31-ի N 93-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանների նախագծերը, որոնք ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2022 թվականի մարտի 7-ի և 10-ի N 05/14.1/1943-2022 N 01/14.1/1942-2022 գրություններով ներկայացվել է շահագրգիռ մարմիններ և կազմակերպություններ քննարկման: Շահագրգիռ մարմինների դիտողությունների և առաջարկությունների համաձայն ներկայումս իրականացվում են հախագծերի լրամշակման աշխատանքները:

Նպատակ 7. Ծախսային ծրագրերի արդյունավետության գնահատում **Խնդիր. Ներդրումների առավել նպատակային ուղղորդում**		
16.	7.1. Ռազմավարական ծրագրերի նպատակայնության արդյունավետության գնահատմանն ուղղված չափորոշիչների համակարգի մշակում՝ ծրագրերի իրականացման բոլոր փուլերում	2023թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով)
Նպատակ 8. Մշակութային կյանքի ապակենտրոնացում, միջազգային կապերի ընդլայնում, ճանաչելիության բարձրացում **Խնդիր. Առկա վիճակի գնահատում, միասնական ծրագրի առաջադրում**		
17.	8.1 Համայնքներում մշակույթի տների և թանգարանների հաշվառում, տեխնիկական վիճակի և արժեքավորության գնահատում արդիականացում	2023թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով)
18.	8.2 Ալ. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի արդիականացում	2023թ., (Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով)
Նպատակ 9. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների հստակեցում.		

Խնդիր. Վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրման միասնական կարգի ստեղծում

19.	9.1. ՀՀ օրենսդրությամբ քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների սահմանում, լիցենզիաների տրամադրման ընթացակարգի կազմում և ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ 9.2. Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների դասակարգում ըստ ռիսկայնության աստիճանի: Քաղաքաշինական թույլատվական ընթացակարգերի համապատասխանեցում սահմանված քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների դասակարգմանը:	««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների (այսուհետ Օրենք) նախագծերի փաթեթը 2021 թվականի դեկտեմբերի 24-ի N 01/22/11868-2021 գրությամբ սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի 2022 թվականի փետրվարի 3-ի N 02/12.21/3162-2022 հանձնարարականի համաձայն 2022 թվականի փետրվարի 15-ի N 01/22/1249-2022 գրությամբ կրկին անգամ ներկայացվել է շահագրգիռ մարմիններ՝ կարծիքի և նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Օրենքի նախագիծը նախնական քննարկել նաև Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչների հետ: Հանձնաժողովների ծանրաբեռնվածության պատճառով Ազգային ժողովի ներկայացուցիչների հետ քննարկումը հետաձգվել է: ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը վերոհիշյալ քննարկումից հետո ՀՀ վարչապետի ախատակազմ կներկայացվի՝ համաձայն հանձնարարականի:

20.	9.3. Քաղաքաշինության բնագավառում միասնական ռեեստրի ստեղծման, կառուցվածքի, վարման և մոնիթորինգի իրականացման հարթակի ստեղծում:	ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 866-Ն որոշման պահանջներն իրականացնելու նպատակով՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերության տնօրինության հետ համատեղ արդիականացվում է ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանի (պաշտոնական կայք՝ www.e-license.am) քաղաքաշինության բնագավառի լիցենզավորման մասը: Միաժամանակ մուտքագրվում են գրանցամատյանում պահանջվող տեղեկատվությունները: Համաշխարհային բանկի «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» շրջանակներում անցկացված մրցույթի արդյունքում «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ն և Էստոնիայի էլեկտրոնային կառավարման ակադեմիան (E-Governance Academy) ստորագրել են պայմանագիր: Ծրագրի շրջանակներում, որպես մեկնարկ ընտրվել է նաև Քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման ընթացակարգը: Քաղաքաշինության կոմիտեի կողմից թվայնացման համար տրամադրվել են ելակետային տվյալներ, տեղեկացվել է օրենսդրական փոփոխությունների նախագծերի մասին:

Նպատակ 10. Մասնագետների որակավորման բարձրացման նպատակով քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացման համակարգի ներդնում, շարունակական մասնագիտական զարգացման գործառույթի ապահովում հասարակական կազմակերպությունների, բարձրագույն կրթության հաստատությունների միջոցով որոնք կբավարարեն օրենսդրությամբ սահմանված պահանջները. **Խնդիր. Լիցենզավորված կազմակերպությունների ռեյտինգավորման ցանկի ստեղծում**		
21.	10.1. Լիցենզավորման գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ձևավորման մեթոդակարգի մշակում: 10.2. Մասնագիտական որակավորման հանրային իրազեկմանը միտված քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների ռեյտինգավորման ցանկի ստեղծում:	9.1, 9.2, կետերով նախատեսված Օրենքների հաստատումից հետո, օրենքով սահմանված ժամկետում, Վարչապետի աշխատակազմ կներկայացվեն ենթաօրենսդրական իրավական ակտեր, ինչպես նաև կսահմանվեն մասնագետների չափորոշիչներ և որակավորման պահանջներ:
Նպատակ 11. ԱՊՀ անդամ-պետությունների համապատասխան ոլորտներում փոխհամաձայնեցված մեթոդների, նոր հայեցակարգերի և ձեռքբերումների շուրջ քննարկումների կազմակերպում ու փորձի փոխանակում: **Խնդիր. Քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտներում առկա խնդիրների լուծման նոր ուղիների ու քայլերի մշակում, պետությունների միջև բարեկամական կապերի ամրապնդում ինչպես նաև 1994 թվականի սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված շինարարության ոլոտում համագործակցության Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարում:**		

22.	11.1 ԱՊՀ անդամ-պետությունների շինարարության ոլորտում համագործակցության միջկառավարական խորհրդի հերթական 42-րդ նստաշրջանի կազմակերպում: 11.2 ԱՊՀ Գործադիր Կոմիտեի կողմից 2021 թվականը ճարտարապետության և քաղաքաշինության տարի հայտարարելու շրջանակներում միջոցառումների կազմակերպում 11.3 ԱՊՀ Գործադիր Կոմիտեի կողմից 2021 թվականը ճարտարապետության և քաղաքաշինության տարի հայտարարելու շրջանակներում միջոցառումների կազմակերպում	Միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ընթացքում:
Նպատակ 12. Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի արդիականացում Խնդիր. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի ապահովում		
23.	**12.1. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (տեխնիկական կանոնակարգեր, շինարարական նորմեր, շինարարական նորմերի կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր) մշակում, վերանայում, տեղայնացում**	2021 թվականի ընթացքում համակարգվել են թվով 19 պետական գնման պայմանագրերով նախատեսված հետևյալ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման/տեղայնացման աշխատանքները 1. Կոյուղի. Արտաքին ցանցեր 2. Շինարարական բետոնե և գեոտեխնիկական կոնստրուկցիաներում ոչ մետաղական կոմպոզիտ ամրանների կիրառման կանոններ (ՀՀ ՔԿԳՀԱՇՁԲ-21/31, 20.04.2021թ)

		3. Սառնաճկած պողպատե բարակապատ տրամատների կիրառմամբ շենքերի ու շինությունների նախագծման կանոնների հավաքածու (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/30, 05.05.2021թ) 4. Ավտոմոբիլային ճանապարհներ (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/28, 15.04.2021թ) 5. Կրող և պատող կոնստրուկցիաներ (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/15, 09.04.2021թ) 6. Բնակելի շենքեր. Մաս II. Անհատական բնակելի տներ (ՀՀ ՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/23, 23.04.2021թ) 7. Վարչական և կենցաղային շենքեր (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/33, 21.06.2021թ) 8. Անվտանգության տեխնիկան շինարարությունում (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/32, 02.06.2021թ) 9. Տանիքներ և տանիքածածկեր (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/18, 09.04.2021թ) 10. Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կոռոզիայից (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/16, 14.04.2021թ) 11. Շինարարությունում գեոդեզիական աշխատանքներ (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/19, 08.04.2021թ) 12. Տարածքի բարեկարգում (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/20, 09.04.2021թ)

		13. Պահեստներ նավթի և նավթամթերքի (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/26, 19.04.2021թ) 14. Նավթի, նավթամթերքի և հեղուկ գազի ստորգետնյա պահեստարաններ (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/27, 09.04.2021թ) 15. Նախագծային աշխատանքների տևողության նորմեր (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/35, 30.09.2021թ) 16. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-20/2, 02.11.2020թ, համաձայնագիր N1, 25.01.2021թ) 17. Շենքերի էներգաարդյունավետության ապահովում, էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/10, 09.04.2021թ) 18. Նախադպրոցական հաստատությունների շենքեր. Նախագծման նորմեր (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/36, 27.10.2021թ) 19. Քաղաքաշինություն.Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում (ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/39, 17.12.2021թ) 2021թ ավարտվել և գտնվում են պետական իրավական փորձաքննության փուլում 1. <Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության

		պաշտպանական կառույցներ> (ՀՀ ՔԿ 09.03.2022թ N01/14.2/2132-2022 գրություն): 2. <Տարածքի բարեկարգում> շինարարական նորմերը (ՀՀ ՔԿ 18.03.2022թ N01/14.1/2571-2022 գրություն): Թվով 17-ի ավարտը նախատեսվում է մինչև 2022 թվականի 3-րդ եռամսյակ:
Նպատակ 13. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի սահմանում **Խնդիր. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման ռեսուրսային մեթոդաբանության մշակում**		
24.	**13.1. Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի մշակում**	Կոմիտեի կողմից սահմանված կարգով մշակվել և 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N01/14.1/9680-2021 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Շինարարության գնագոյացման մեթոդաբանության արդիականացման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2021 թվականի նոյեմբերի 3-ի նիստի N ԿԱ/209-2021 արձանագրության 4-րդ կետով Հայեցակարգին տրվել է բացասական դիրքորոշում և առաջարկվել է այն մեկ անգամ ևս շրջանառել և քննարկել մասնավոր հատվածի մասնագետների հետ, անհրաժեշտության

		դեպքում Հայեցակարգով նախատեսված միջոցառումների իրականացման ակնկալվող արդյունքներին հասնելու համար մշակել համապատասխան կարգավորումներ նախատեսող իրավական ակտի նախագիծ: Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2022 թվականի մարտի 11-ի N 01/18/2029-2022 գրությամբ շահագրգիռ մարմիններ քննարկման է ներկայացվել «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի շրջանակներում նախատեսվել են համապատասխան կարգավորումներ՝ Կոմիտեի իրավասությունները սահմանող լիազորող նորմեր, շինարարությունում գնագոյացման քաղաքականության մշակման աշխատանքների իրականացման համար: Բացի այդ, Կոմիտեի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի նախագծով նախատեսվել են ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքի խոշորացված ցուցանիշների ժողովածուի վերանայման, արդիականացման աշխատանքներ:

Նպատակ 14. Շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրում և տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնում **Խնդիր. Նոր տեխնոլոգիաների ներդրման համար նորմատիվ փաստաթղթերի ապահովում**		
25.	14.1. Շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրման և տեղական հումքի կիրառության ոլորտների ընդլայնմանը նպաստելու ուղղությամբ աջակցության ցուցաբերում	<Շինարարական բետոնե և գեոտեխնիկական կոնստրուկցիաներում ոչ մետաղական կոմպոզիտ ամրանների կիրառման կանոնների հավաքածու>-ի մշակման համար <Ճարտարապետության և շինարարության Հայաստանի Ազգային Համալսարան> Հիմնադրամի հետ կնքվել է 20.04.2021 N ՀՀՔԿ ԳՀԱՇՁԲ-21/31 պետական գնման պայմանագիրը: <Սառնաճկած պողպատե բարակապատ տրամատների կիրառմամբ շենքերի ու շինությունների նախագծման կանոնների հավաքածու>-ի մշակման համար <Վիլլաշին> ՍՊԸ հետ կնքվել է 05.05.2021 N ՀՀՔԿ ԳՀԱՇՁԲ-21/30 պետական գնման պայմանագիրը: Ներկայումս սահմանված կարգով իրականացվում են վերը նշված նորմերի մշակման աշխատանքները:
Նպատակ 15. Գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների կազմակերպում **Խնդիր. Ապահովել շինարարական ոլորտի գիտատեխնիկական զարգացումը**		

26.	15.1. «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն»–ի արդիականացում	17.02.2022թ կայացած <Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն> ԲԲԸ (ՔԾՓԿ) և <ԱԻՍՄ> ԲԲԸ Խորհուրդների միացյալ նիստի արձանագրությամբ՝ «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ տնօրինությանը հանձնարարվել է առողջացման ծրագրի նախագիծը լրամշակել և ուղեկցող գրությամբ պաշտոնապես ներկայացնել ՀՀ քաղաքաշինության կոմիտե:
Նպատակ 16. Շենքերի ու շինությունների սեյսմակայունության ապահովում, անվտանգ շահագործման նպատակով միջոցառումների մշակում և իրականացում **Խնդիր. Հայաստանի Հանրապետության տարածքում առկա սեյսմիկ ռիսկի նվազեցման և բնակչության անվտանգության ապահովման հիմնախնդրի լուծում**		
27.	16.1. Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	«Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի

		Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը շահագրգիռ մարմինների դիտողությունների և առաջարկությունների համաձայն լրամշակվել և Կոմիտեի 2021 թվականի նոյեմբերի 26-ի N 01/14.1/10698-2021 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական-իրավական փորձաքննության: ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 01/14.1/12077-2021 գրությամբ Նախագծերի փաթեթի վերջնամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:
27.	16.2. Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերի և շինությունների հետագա շահագործման հետ կապված հարցերի կանոնակարգում	Կոմիտեի կողմից սահմանված կարգով մշակվել է «Տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերը/շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու կարգը, լիցենզավորված կազմակերպության եզրակացության և միջգերատեսչական հանձնաժողովի որոշման օրինակելի ձևերը

		հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 01/14.2/11930-2021 գրությամբ ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2022 թվականի մարտի 11-ի N 01/18/2029-2022 գրությամբ շահագրգիռ մարմիններ քննարկման է ներկայացվել «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի շրջանակներում նախատեսվել են համապատասխան կարգավորումներ՝ Կոմիտեի իրավասությունները սահմանող լիազորող նորմեր, տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերը/շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու գործընթացն ապահովելու համար:
Նպատակ 17. Սողանքային երևույթների կանխատեսում և դրանցից պաշտպանություն **Խնդիր. Սողանքային աղետից պաշտպանության ուղղությամբ հետազննությունների իրականացում և ռեժիմային դիտարկումների (մոնիտորինգ) համակարգի ստեղծում**		

28.	17.1.Առավել վտանգավոր սողանքային տեղամասերում հետազննությունների և կանխարգելիչ միջոցառումների ծրագրերի մշակում	Կոմիտեի կողմից սահմանված կարգով մշկավել է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը և 18.03.2022թ N 01/14.2/2026-2022 գրությամբ ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:
Նպատակ 18. Բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգում **Խնդիր 1. Բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման, արդիականացման հետ կապված հարցերի կանոնակարգում**		
29.	18.1.1 Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնների հաստատում Վերջնաժամկետ՝ 2022 թվականի 3-րդ տասնօրյակ	«Բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնները» հաստատվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունվարի 31-ի N 02-Ն հրամանով

30.	18.1.2 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատա¬կազմ	Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով
31.	18.1.3 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների սահմանում՝ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքում լիազորող նորմի սահմանում և դրա հիման վրա ՀՀ կառավարության որոշման ընդունում Վերջնաժամկետ՝ 2022 թվական (կիսամյակային հաշվետվություններ)	Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով

32.	18.1.4 Բազմաբնակարան շենքերի կառավարմանը, պահպանմանը և շահագործմանն ուղղվող ֆինանսական հոսքերի գործուն համակարգի (ֆոնդի) ստեղծման իրագործելիության ուսումնասիրություն և դրա հիման վրա առաջարկությունների մշակում Վերջնաժամկետ՝ 2022 թվական (կիսամյակային հաշվետվություններ)	Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով
Խնդիր 2. Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի բնակիչների վերաբնակեցման, ինչպես նաև գոյություն ունեցող բնակֆոնդի ուժեղացման-վերակառուցման հետ կապված հարցերի կանոնակարգում		
33.	18.2.1 Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի բնակիչների վերաբնակեցմանն, ինչպես նաև գոյություն ունեցող բնակֆոնդի ուժեղացման-վերակառուցմանն ուղղված ծրագրերի իրականացման համար իրավական հիմքերի ստեղծում «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում լիազորող նորմի սահմանում և դրա հիման վրա ՀՀ կառավարության որոշման ընդունում Վերջնաժամկետ՝ 2021-2023 թվականներ (կիսամյակային հաշվետվություններ)	Որպես միջոցառման 1-ին քայլ Քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել և սահմանված կարգով ու ժամկետում (2021 թվականի նոյեմբերի 30-ի դրութամբ) ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից՝ «Տարածքային կառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսված է սահմանել անբավարար

		տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդրին առնչվող հարցերում Կառավարության, պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների համար լիազորող նորմերը: Փաթեթը քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2021 թվականի դեկտեմբերի 13-ի նիստում: Քննարկման արդյունքում հնչեցված դիտարկումների հիման վրա օրենսդրական փաթեթը գտնվում է շահագրգիռ մարմինների հետ լրացուցիչ քննարկման փուլում:
Խնդիր 3. Բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականության ամրագրում		
34.	18.3.1 ՀՀ Սահմանադրությամբ Կառավարության՝ բնակարանային շինարարության հանձնառությունը խթանելու նպատակով բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականությունը սահմանող ՀՀ կառավարության որոշման ընդունում Վերջնաժամկետ՝ 2023 թվական (կիսամյակային հաշվետվություններ)	Կատարման արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվությունների տեսքով

Խնդիր 4. Աղետի գոտու հիմնախնդիրների կանոնակարգում		
35.	18.4.1 Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի ավարտ Վերջնաժամկետ՝ 2021 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ 8.4.1 Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևան¬քով անօթևան մնացած ընտա¬նիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետա¬կան աջակցության ծրագրի ավարտ	Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի շահառու է ճանաչվել ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի բնակավայրերի թվով 5419 ընտանիք: Նշված ընտանիքներից 5419 ընտանիքներից՝ - 4838-ի բնակարանային խնդիրների լուծման համար 2008-2017 թվականների ընթացքում հատկացվել է շուրջ 65.0 մլրդ. ՀՀ դրամ: - 553-ի բնակարանային խնդիրը դիտարկվել է 2018-2021 թվականներին իրականացված Ծրագրի ավարտական փուլի շրջանակներում, որի համար հատկացվել է շուրջ 5.7 մլրդ. դրամ: Մասնավորապես, նշված 553 ընտանիքներից՝ - 51 ընտանիքի խնդրի լուծման համար 2018 թվականին 0.46 մլրդ. դրամ, - 288 ընտանիքի խնդրի լուծման համար 2019 թվականին 1.85 մլրդ. դրամ, - 214 ընտանիքի խնդրի լուծման համար 2020 թվականին՝ 3.4 մլրդ դրամ*: Ծրագրի իրականացման արդյունքում դեռևս լուծման կարիք ունի Շիրակի մարզի Ջրաձոր

		համայնքի թվով 28 ընտանիքի բնակարանային խնդիր: Այդ խնդրի լուծումը և ֆինանսավորման հարցը դիտարկվելու է Կառավարության 27.08.2020թ. N1411-Լ որոշման շրջանակներում՝ Կապսի ջրամբարի կառուցման նպատակով Ջրաձոր համայնքից վերաբնակեցվող ընտանիքների հետ միասնական մոտեցումների համաձայն և նախատեսված աջակցության ամբողջ ծավալով: Կառավարության 17.06.2021թ. N1006-Ն որոշմամբ սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Ծրագրի շրջանակներում բնակապահովման իրավունքը վերականգնած՝ ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների՝ - բնակարանային խնդիրները լուծվելու են ԲԳՎ-ի տրամադրման միջոցով (բացառությամբ գյուղական բնակավայրերում մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների, որոնց բնակարանային պայմանների բարելավման նպատակով տրամադրվելու է ուղղակի ֆինանսական աջակցություն՝ 3.0 մլն դրամի չափով), - բնակարանային խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տարեկան պետական բյուջեներում նախատեսվելու են համապատասխան մարզպետարանների կողմից Կոմիտեի հետ համաձայնեցված և ծրագրի բյուջետային

		գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմին՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված հայտի հիման վրա:
36.	18.4.2 Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման հետ կապված հարցերի կանոնակարգման նպատակով մոտեցումների սահմանում և դրանց հիման վրա ՀՀ կառավարության համապատասխան որոշումների ընդունում Վերջնաժամկետ՝ 2021-2023 թվականներ (կիսամյակային հաշվետվություններ)	ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N1658-Ա որոշման շրջանակներում փաստագրվել է երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերում փաստագրված շուրջ 7200 ոչ հիմնական շինություն, դրանց մասով կազմվել են աղյուսակային և քարտեզագրական նյութեր, մշակվել է խնդրի կանոնակարգման առաջարկությունների փաթեթ: Համապատասխան մարզպետարանների և համայնքների հետ համատեղ իրականացվել է ոչ հիմնական շինությունների և դրանցում բնակվող ընտանիքների կարգավիճակի գնահատում: Արդյունքում, խնդիր ներառվել է Կառավարության ծրագրում, ըստ այդմ՝ նաև Կառավարության գործունեության 2021-2026 թվականների միջոցառումների ծրագրի նախագծում:

		Մասնավորապես Կառավարության ծրագրով նախատեսվում է նախորդող ժամանակահատվածում իրականացված փաստագրման արդյունքների հիման վրա շարունակել երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ավելի քան 7000 ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման, այդ շինությունների քանդման և տարածքների քաղաքաշինական միջավայրը վերականգնելու հետ կապված գործընթացը: Կառավարության 2021-2026թթ. միջոցառումների ծրագրի նախագծի համաձայն նախատեսվում է ՝ • 2021-2022թթ. ստեղծել իրավական հիմքեր. - աղետի գոտու բնակավայրերի հողամասերը ոչ հիմնական շինություններից ազատման և քաղաքաշինական միջավայրի վերականգնման համար՝ առաջնահերթ կարգով դիտարկելով աղետի գոտու քաղաքային բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ազատում՝ տեղադրված/կառուցված ոչ հիմնական շինությունները, - ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման համար՝ տարբերակված մոտեցմամբ, կախված

		ընտանիքի անօթևանի կարգավիճակում գտնվելու հիմքերից • սկսած 2023 թվականից բուն ծրագրերի իրականացում՝ Կառավարության կողմից սահմանված մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն: Գործընթացը շարունակական է և ընթացքի վերաբերյալ արդյունքները կներկայացվեն կիսամյակային հաշվետվություններ